

Տեղերը ապահովելու համար դիմել՝ «Աղ-
բալեան» ակումբի վարչություն եւ Պուրճ
Համուն՝ տիպոքթեք ձեռք:

COTER

TEMPERATURE CONTROLLER

G. Ayanian & Sons

Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
 Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

ՆԵՐՔԻՆ ԽՄՈՐՈՒՄՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

6 եւ 13 Յուլիսին Հայաստանի Ժողովրդական Կուսակցութեան (Հ. Ժ. Կ.) Քաղաքական խորհուրդը դումարած է նիստեր, որոնց ընթացքին տուած է որոշումներ, որոնցմէ մէկը կը դատապարտէր «քաղաքացիական ծառայութեան մասին» օրինագիծին կողմ քուէարկած Հ. Ժ. Կ.ի անդամ պատգամաւորներուն վարքագիծը, միևնույժ կը դիմուէր Հ. Ժ. Կ. վարչութեան՝ Հայաստանի խորհրդարանի նախագահ Արմէն խաչատրեանը եւ Գագիկ Ասլանեանը կուսակցական պաշտօններէն ազատ կացուցելու համար:

Միւս կողմէ, 18 Յուլիսին Հ. Ժ. Կ.ի անդամ խումբ մը պատգամաւորներ՝ Գագիկ Ասլանեան, Մանուէլ Բաղէեան, Աշոտ Գալոյեան, Դաւիթ Յովհաննէս, Գուրգէն Եղիազարեան, Վանիա Յովհաննիսեան, Միւսաք Մկրտչեան, Գագիկ Ոսկանեան եւ Սամսոն Սարգսեան, հանդէս եկան յայտարարութեամբ մը, ուր կ'ըսուի, որ 27 Հոկտեմբերէն ետք, կորսնցնելով ղեկավարը, Հ. Ժ. Կ. պատգամաւորներէն շատեր ուժ գտան շարունակելու իրենց առկնտրոյին եւ «Միասնութիւն դաշինք»ի ծրագիրներուն իրականացումը:

«Սակայն կուսակցութեան քաղաքական գիծի յետհոկտեմբերեան ձախողութիւնները, որոնք արտա-յայտուեցան յատկապէս վերջին չորսին» կ'ապուած «քաղաքացիական ծառայութեան մասին» օրինագիծի շուրջ Հ. Ժ. Կ.ի առանձին պատգամաւորներու դիրքորոշման հետ, առիթ հանդիսացան, որ կուսակցութեան նորոնտրոյ քաղաքական խորհուրդը առողջ քննադատութեան բացառման պայմաններուն մէջ բացայայտ ճնշում գործարէր պատգամաւորներուն վրայ, ինչ որ ակնյայտօրէն կը վտանգէ Հ. Ժ. Կ.ի վարկանիշը՝ կուսակցութեան նկատմամբ անվստահութենէն հեռացան Հ. Ժ. Կ.ի հիմնադիրներ եւ պատգամաւորներ, կրուած է յայտարարութեան մէջ:

Աւելցնենք, որ Հ. Ժ. Կ.ի անդամ եւ Ազգային Ժողովի պատգամաւոր Ռոպէրթ Ենգոյեան նոյնպէս զի-մում ներկայացուցած է կուսակցութենէն հեռանալու մասին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԵՏՈՒ ԿՐԱՅ

ՅՈՒՆԱՍՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱԳԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ

Տնտեսական Համագործակցութեան եւ Զարգացման կազմակերպութեան մէջ Յունաստանի ներկայացուցչութեան խորհրդական Յովիթրիս Սեքելիս, որ Համաշխարհային դրամատան խորհրդատուական խումբի փարիզեան հանդիպման կը ներկայացնէր յունական կողմը ըսած է, որ Յունաստանը միշտ կ'արեւոր նկատած է Հայաստանի հետ ունեցած փոխյարաբերութիւնները եւ չըջանի մէջ գերակայութիւն կու տայ անոր հետ ունեցած գործընկերութեան:

Ըստ Տ. Սեքելիսի, 1995էն 1999 թուականներուն Յունաստանի օժանդակութիւնը Հայաստանի կազմած է 30,4 միլիոն տոլար, ընդհանուր ծաւալով տրուած է 10 միլիոն տոլարի վարկ, կամ զգալի սեփական ներդրումներ:

«Մենք կ'ողջունենք Հայաստանի կառավարութեան՝ մաքրօ-տնտեսական միջոցաւոր կայունացնելու, տնտեսութիւնը հաստատուն զարգացման ուղիի վրայ դնելու, գործարարական միջոցաւոր կատարելագործելու, գործազրկութիւնն ու ընչազրկութիւնը նուազեցնելու ուղղութեամբ ի գործ դրուած ջանքերը եւ հաստատապէս արկայած ենք եւ պիտի արկայցինք անոնց իրադրոժման համար», յնած է Տ. Սեքելիս:

Ըստ իրեն, Յունաստանի կառավարութիւնը կը դիտարկէ Հայաստանին տրուելիք նոր օժանդակութիւններու կարելիութիւնները, որոնք պիտի ներառուին օգնութեան նոր՝ 2002- 2006 թուականներու հնգամեայ ծրագրին մէջ:

Յունաստանի ներկայացուցիչը տեղեկացուցած է նաեւ, որ աստիճանաբար արշաւ Հայաստանի մէջ տեղի ունենալիք մարդահամարին, իր երկրի կառավարութիւնը պատրաստ է արամադրել 100 հազար տոլար:

ԱՅՇԻԼ

ԶԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԱՊԱՇՏՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

1 ՇԱՐԱԹ՝ 12 \$

ԶԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ ԸՆԻԱՂԱՆՈՑԱՅԻՆ ԱՊԱՇՏՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՐԿԱԿԻ ԱՆԵՐԱԾԵՏՈՒԹԻՒՆ Ե

ԱՅՇԻԼ ԱՅԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԸՆՈԱՅԱՅԻՆ. (01)242556 ԵՒ (01)242557:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևելու թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԱՊՀԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՆԿԻՆ ՎՐԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ԳՐԱԻԷ ԵՐԿՐՈՐԴ ԴԻՐՔԸ

«Մնարք» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, թէ Միջազգային Գաղթի Կազմակերպութեան (Այ Օ Էմ) Հայաստանի մէջ ներկայացուցիչ Նիլիմ Պարուս յայտնած է, թէ Արեւմտեան Եւրոպայի երկիրները գաղթած 532 հայեր Կազմակերպութեան Հայաստանի գրասենեակին ճիգերով վերադարձուած են Հայաստան: Եւրոպական երկիրներուն մէջ «երջանկութիւն փնտռող» Հայաստանի քաղաքացիները գոյատեւելու միջոցներ չունէին:

Ն. Պարուս նաեւ յայտնած է, թէ 2000ի ընթացքին Արեւմտեան Եւրոպայի երկիրներու մէջ ապաստան փնտռած են 6590 հայեր, որոնց 58 առ հարիւրը՝ Գերմանիոյ մէջ, 20 առ հարիւրը՝ Պելճիքայի մէջ եւ 20 առ հարիւրը՝ Հոլանտայի մէջ:

Ն. Պարուս աւելցուցած է, թէ եւրոպական երկիրներուն մէջ «աւելի լաւ կեանք փնտռող» ԱՊՀի երկիրներու քաղաքացիներուն մէջ Ռուսիայէն ետք Հայաստան կը զբաւէ երկրորդ դիրքը:

ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՀՆԱԳԷՏՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՎԵՐՍԿԱՍԻ ՊԵՂՈՒՄՆԵՐՈՒՆ

Մէկ տարուան ընդմիջումէն ետք, հայ-իտալական հնագիտական խումբը վերսկսած է Սեւանի աւազանի հնագոյրեան յուշարձաններու հետազոտութիւններուն եւ անակնկալօրէն յայտնաբերած է քարի վրայ արձանագրուած արամբէն արձանագրութիւն մը, որ պէտք է վերծանուի:

Հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի տնօրէն ղոհուր Արամ Քալանթարեանի համաձայն, արդէն եօթը տարի է ի վեր գոյգ երկիրներու հնագէտները միասին հետազոտութիւններ կը կատարեն: Այդ աշխատանքներուն ընթացքին Սեւանայ լիճի աւազանին մէջ յայտնաբերուած է Ն.Ք. 3-1 հազարամեակներու բնակավայրեր, բերդեր, գերեզմանատուներ, որոնք կը վկայեն, թէ այդ վայրին մէջ բարձր մշակոյթ ունեցող մարդիկ բնակած են:

Իտալացի հնագէտ Ռաֆայէլի Պիչինոնէ մեծ յոյսեր կ'ապած է ներկայ աշխատանքներուն, որոնք Գաւառի չըջանի մէջ պիտի շարունակուին քանի մը ամիսներ: Ըստ անոր, Հայաստանի եւ Իտալիոյ գիտնականներու հետազոտութիւններուն իրրեւ արդիւնք պիտի կազմուի Սեւանի աւազանի յուշարձաններու հնագիտական քարտէսը:

ՀԱՅ ԾՆՆՈՂՔԻ ՄԸ ԵՐԵՒԱՆ ՄԱՀԱՑԱԾ Է ՎԱՏ ՄՆԵԴԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Հարաւային Անդլիոյ մէջ Կարապետ եւ Յասմիկ Մանուէլեան ամրաստանուած են իրենց ինն ամսուան աղջնակը սպանած ըլլալու յանցանքով: Երեւան մահապատ է միայն հում պտուղներու սննդառութեան պատճառով տկարացումի եւ այդ միջոցով յառաջացած թոքաոտապի պատճառով: Ամրաստանեալները մեղքած են ընդունելի իրենց աղջնակը սպաննած ըլլալու յանցանքը, սակայն անոնք ներկայացուցած են երեխան ինչո՞ւ հանդէպ բրտութիւն կատարած ըլլալու նուազ ծանր յանցանքով դատապարտուելու դիմում: Անոնք ընդունած են Սեպտեմբեր 1999էն Յուլիս 2000ի միջեւ իրենց գաւաղը անհարկի շարժարանքներու հնթարկած ըլլալու իրողութիւնը:

Չոլգիի դատաճիտը պիտի արձակուի Սեպտեմբերին: Անոնց փաստարանը գահոնք ներկայացուցած է իրրեւ «սիրալիր, բայց մոլորած ծնողներ»:

«ՄԻՍ ԵՒ ՄԵՍԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ - 2001» ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

17 Յուլիսին Գ. Սունդուկեանի անուան պետական ակադեմիական տրամալիքակա թատրոնին մէջ տեղի ունեցաւ 53ն 7 տարեկան երեխաներու «Միս եւ Մրսթըր Հայաստան - 2001» գեղեցկութեան, ներդաշնակութեան եւ նրբագեղութեան մրցում - փառատօնը:

Մրցումին մասնակցող 27 Կոլգերի, որոնք կը ներկայացնէին Երեւանը, Աշտարակը եւ Գիւմրին, հանդէս եկան երեք փուլով. առաջին փուլին ներկայացան հերթաթիւներու հերոսներու կերպարներով, 2րդ փուլին ներկայացուցին արագ պար, իսկ 3րդին վայր պարներին:

Անոնցմէ «Միս Հայաստան - 2001», տիտղոսին արժանացաւ Հռիփսիմէ խաչատրեան՝ Երեւանէն, իսկ «Մրսթըր Հայաստան - 2001» տիտղոսին արժանացան երկու հոգի՝ հաւաքելով հաւասար միաւորներ՝ Երեւանցիներ Օննիկ Մանուկեան եւ Ռոպէրթ Թովմասեան:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՄԼԵՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԵՍԵՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ - ՀԵՆՈՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՐԱՆՃԱՆՔ

WELCOME VACATIONS

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 21 Յուլիս 2001ին, երեկոյեան ժամը 9:00ԵՆ սկսեալ, Ազգ. Եղիշէ Մանուկեան քուէի բաւկն ճերս, Տպալալ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՄԼԵՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԵՍԵՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ - ՀԵՆՈՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՐԱՆՃԱՆՔ

WELCOME VACATIONS

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 21 Յուլիս 2001ին, երեկոյեան ժամը 9:00ԵՆ սկսեալ, Ազգ. Եղիշէ Մանուկեան քուէի բաւկն ճերս, Տպալալ:

ԲՈՂՈՔԻ ՅՈՅՑ՝ ԿԱՊԱՆԻ ԱՍՖԱԼԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ «ՎԱՃԱՌՄԱՆ» ԱՌԻԹՈՎ

«Երկիր» թերթը կը յայտնէ, թէ Հ. Յ. Դաշնակցութեան Կապանի «Արամ Մանուկեան» կոմիտէն թերթին փոխանցուած տեղեկութիւններուն համաձայն, չըջանի բնակչութեան մէջ լուրջ լարուածութիւն ստեղծուած է չըջանի ասֆալթի գործարանին փակման առիթով: Կիրակի, 15 Յուլիսին, շատ արագ կերպով վերցուած են արդէն գերմանական արտադրութեան արդիական երեկտրական հոսանքի թելերը, որոնց համար, ըստ հաւաստի տուեալներու, վրացական ընկերութիւն մը մէկ միլիոն դրամ վճարած է:

Երկուշաբթի, 16 Յուլիսի առաւօտուն, գործարանին շուրջ 50 պաշտօնեաները եւ քաղաքի բնակչութիւնը ըտ-ղոքի բաց ցոյց մը կազմակերպելով՝ փակած են քաղաքին գլխաւոր պողոտան, որպէսզի թոյլ չտան գործարանի սարքերուն դուրս բերուիլը եւ իշխանութիւններուն ուշադրութիւնը հրաւիրեն այս արարքին վրայ:

Յատկանշական է, որ տեղական եւ մարզային իշխանութիւնները սկիզբէն իսկ չմիջամտեցին այս ժողովրդական արդար ըողոքին առաջը առնելու համար: Աւելին՝ անոնք պատճառարանեցին, թէ իրենք անգոր են կեցնելու այս արարքը, եւ այս բոլորը կը կատարուին ներքին գործոց եւ փոխարարմիջոցներու գոյգ նախարարութիւններուն արտօնութեամբ:

Տեղին է ընդգծել, թէ 1997 - 2003 տարեշրջաններու հաշուարկումով, վարձու տրուած Կապանի ասֆալթի գործարանը 1998ին սեփականաշինորհուած էր ընդամէնը 3,05 միլիոն հայկական դրամով:

Այս առիթով, չըջանի Հ. Յ. Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէն յայտարարութեամբ մը կոչ ւրած է չըջանի քաղա-

քական ուժերուն եւ բնակչութեան, որպէսզի մասնակցին քողոքի ցոյցին՝ առաջը առնելու համար այս անընդունելի երեւոյթին:

«Երկիր» կը հաղորդէ, նաեւ որ իրեն հասած նոր տեղեկութեան մը համաձայն, 13 Յուլիսին գործարանի անձնակազմին մէջ տարուած բացատրական աշխատանքին շնորհիւ, Հ. Յ. Դ. Կապանի «Արամ Մանուկեան» կոմիտէութեան ներկայացուցիչները յաջողած են կասեցնել սարքաւորումները եւ երկտրականութեան թելերը վերցնելու աշխատանքները, իսկ յաջորդ օրը տեղի ունեցած ըողոքի հաւաքին իրրեւ արդիւնք՝ հաւաքի սկսելէն երկու ժամ ետք տեղի իշխանութիւններուն ներկայացուցիչները, Սիւնիքի մարզպետի գլխաւորութեամբ, ընդառաջելով ցուցարարներու պահանջին, բանակցութիւններ սկսած են Հ. Յ. Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէին հետ:

Յուշարարներուն պահանջները ներառուած են երեք կէտ. դադրեցնել գործարանը փակելու աշխատանքը, ստուգել սեփականաշինորհման եւ վաճառքի օրինականութիւնը եւ քայքայեթեւեւ կերպով գործարանը Կապանի մէջ ձգելու համար:

Վերոյիշեալ պահանջները բաւական պատասխանատուութեամբ ընդունուած են Սիւնիքի մարզպետ Է. Բարսեղեանի կողմէ: Ան հաւաստիացուցած է, որ ինք նոյնպէս դէմ է գործարանի փակման եւ սարքաւորումներու վաճառքին, հետեւեալար պատրաստ է որոշակի քայլերու դիմել փակման գործընթացը կասեցնելու եւ առոր զուգահեռ գործարանի ղեկավարութեան հետ բանակցութիւններ սկսելու ուղղութեամբ:

ԵՐԳՈՒՄ ԵՆ ՇՈՒՇԻԻ ԵՒ ՊԵՐՈՒԹԻ ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԸ

«Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատօնի շրջանակներում Յուլիսի 10ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն ժամանելից Պէլլութի «Կարկաշ» երգչախումբը, որի գեղարուեստական ղեկավարն է Լիւրանանի պետական երաժշտանոցի երգչախումբի հիմնադիր եւ ղեկավար Զաքար Քէշիշեանը: Պէլլութի հայ խմբավարը Երեւանի երաժշտանոցի իր համաերգերից Ռուսիանա Աղաջանեանի հետ 1993 թուականին հիմնադրեց Շուշիի «Վարանդա» երգչախումբը: Շուշիի վարչակազմի մշակոյթի հարկերին Կոմիտասը յարգելով պատմութեան արժանիքները, իր համարում է, թէ Զաքարի ղեկին էր, որ «Կարկաշ»ը եւ «Վարանդա»ն հանդիսանալու էին «Երկրի երգչախումբն էլ ունեն նոյն երգացանկը: «Կարկաշ»ականներին «Վարանդա»ականները դիմաւորեցին աղուհացով:

Յուլիսի 10ին հանդիպման պատգամը կ'աւելցնէր «Կարկաշ»ը, որի ղեկավարը Զաքար Քէշիշեանն էր: Պէլլութի հայ խմբավարը Երեւանի երաժշտանոցի իր համաերգերից Ռուսիանա Աղաջանեանի հետ 1993 թուականին հիմնադրեց Շուշիի «Վարանդա» երգչախումբը: Շուշիի վարչակազմի մշակոյթի հարկերին Կոմիտասը յարգելով պատմութեան արժանիքները, իր համարում է, թէ Զաքարի ղեկին էր, որ «Կարկաշ»ը եւ «Վարանդա»ն հանդիսանալու էին «Երկրի երգչախումբն էլ ունեն նոյն երգացանկը: «Կարկաշ»ականներին «Վարանդա»ականները դիմաւորեցին աղուհացով:

Տարբեր ժամանակներում իրաւամբ հայկական մշակոյթի կենտրոններին մէկը համարուող Շուշի եւ այցելել Կոմիտասը, Քրիստափոր Կարապետեան, այլ երեւելի մեղիներ:

1920 թուականին ցեղասպանութեամբ ընդհատուած Շուշիի մշակութային կեանքը յարութիւն առաւ 1992ին, երբ հայ ազատամարտի դրօշը ծածանուեց քաղաքում: Մէկ տարի անց

հիմնադրուեց Շուշիի դպրոց - վարժարանը, որին կից ստեղծուեց «Վարանդա» մանկապատանեկան երգչախումբը: Անցնող ութ տարիներին ընթացքով «Վարանդան» երգել է շուրջ 200 երգ, որոնց կէսից աւելին՝ առաջին կատարումներով, տասնեակ համերգներ է տուել Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Լիւրանանի հեռուստատեսութեամբ եւ ռատիոյով:

Շուշիի մշակութային կեանքը «Վարանդայով» չի սահմանափակուում: Շուշի երեք հազար բնակիչ ունեցող քաղաքն ունի դրադարան, թանգարան, պատկերասրահ, երաժշտական դպրոց, մշակոյթի տուն, արամթիքական թատրոն, Սոս Սարգսեան՝ մանկապատանեկան թատրոն, «Երեւանի Մանուկեան» տիկնիկային թատրոն եւ կից գործող «Մեղեղի» պարաթատրոն, Ժողովրդային Կոմիտէի համոյթ:

Շուշիում ընդհատուած մշակութային կեանքը իր հունի մէջ է մտնում:

Ուրեմն՝ կ'ապրի նաեւ Շուշին:

ԹԱԹՈՒԼ ՅԱԿՈԲԵԱՆ

«Ազգ»

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԿՈՄԻՏԱՍ» ՄԱՍՆԱԳԻՐ

«ԿԱՐԴԱԿԱՌ»

Կիրակի, 22 Յուլիս 2001, «Ն. Փալանճեան» ճեմարանի պարտեզին մէջ, առաւօտեան ժամը 11:00ԵՆ սկսեալ:
●Կրնաք թրջուիլ...

ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԿՈՄԻՏԱՍ» ՄԱՍՆԱԳԻՐ

«ԿԱՐԴԱԿԱՌ»

Կիրակի, 22 Յուլիս 2001, «Ն. Փալանճեան» ճեմարանի պարտեզին մէջ, առաւօտեան ժամը 11:00ԵՆ սկսեալ:
●Կրնաք թրջուիլ...

ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

ԻՆՉՊԻՍԻ ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐ ԵՒ... ԻՆՉ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Հայ քաղաքական մտքի մեթորեայ արշակա-
ւանքի կարծեք կը պակսէր միայն այսպէս կոչ-
ւած «Թուրք - Հայկական Հաշտութեան Յանձ-
նախումբ» մը... Հիմա որ այդպիսին այ աւել-
ցած է մեր իրականութեան մէջ, կարելի է ամ-
բողջացած Գկատել անտիրութեան, բախ-
տախճորութեան եւ պատեհապաշտութեան
մթնոլորտը ու պատրաստ պէտք է գտնուի
ամէն կարգի անհեթեթութեանց, աւելին չըսե-
լու համար:

Թէեւ Գորայայտ այս Գախաձեռնութեան
բուն հեղինակները այնքան այ բացայայտուած
չեն, բայց յայտնապէս ամերիկեան մամուլն ու
քարոզչական միջոցները զգալի շահագրգռու-
թիւն կը ցուցաբերեն եւ կ'անապարեն յոյսեր
կապելու անոր գործունէութեան: Ամերիկացի
անձնաւորութիւններ Գաւե գործնական մաս-
նակցութիւն կը բերեն Գախաձեռնուող հանդի-
պումներուն եւ շփումներուն:

Նոյնպէս կարելի չէ ստուգովն բնութագ-
րել ինքնութիւնը եւ պատկանելիութիւնը ինք-
նակոչ այս «Հաշտութեան Յանձնախումբ»ի
թուրք մասնակիցներուն, որոնք այս կամ այն
առումով պաշտօնական հանգամանքի տէր
են: Բայց Գախաձեռնութեան ստացած քարոզ-
չական արձագանգէն մեկնելով՝ որոշապէս
կարելի է այժմէն հաստատել, թէ անոնք հայ
ժողովուրդին դէմ գործուած ցեղասպանու-
թիւնը ուրացողներ են եւ, յաւաքուն պարագա-
յին, կրնան ըլլալ անցեալը մոռնալու եւ յարա-
բերութեանց ճոր էջ բանալու ցնորատեսու-
թեան կողմնակիցներ:

Միւս կողմէ՝ բացորոշ, բայց մտահոգիչ է
ինքնութիւնը կասկածելի այս Գախաձեռնու-
թեան հայ մասնակիցներուն: «Թուրք-Հայկա-
կան Հաշտութեան Յանձնախումբ»ին մէջ ներ-
կայացուած է, առաջին հերթին, ազգային գա-
ղափարախօսութիւնը ըստ ամենայնի մերժող
եւ ժամանակավրէպ հոշակած ՀՀԾԳ: Նոյնպէս
ներկայացուած է Ամերիկայի Հայկական Հա-
մագումարը (*Արմինիըն Էսեմպլի*), որ ծանօթ
է հայկական շահերը ամերիկեան ընդհանուր
քաղաքականութեան մէջ համարկելու, այլ
հարկատու դարձնելու իր վարքագիծով, ինչ-
պէս Գաւե՝ Հայ Դատի պաշտարին եւ հայկա-
կան պահանջատիրութեան Գկատմամբ պահ-
պանողական իր վերապահութիւններով:

Ահա թէ ինչպիսի՜ «հաշտարարներ»ու մէկ-
տեղումով կազմուած է թուրք եւ հայ ժողո-
ւորդներուն, Գաւե՝ Թուրքիոյ եւ Հայաստանի
միջեւ իբր թէ «հաշտութեան» ենթահող պատ-
րաստելու համար կեանքի կոշուած այս Գորե-
լուկը:

Ինչպէս որ Հ. Յ. Դ. Բիրոյի Յուլիս 13 յայ-
տարարութիւնը կ'ընդգծէ, մենք դէմ չենք հա-
լելութուրք երկխօսութեան, բայց հիմնաւոր
ամէն պատճառ ունինք դէմ ըլլալու պատմա-
կանօրէն ու բնականօրէն անխուսափելի այդ
երկխօսութեան ինչ-ինչ հաշիւներով շահար-
կումին: Մանաւանդ որ Գորայայտ Գախաձեռ-
նութեան հեղինակներն ու մասնակիցները
իրենց անվստահելի ինքնութեան ու ինքնա-
կոչ յաւակնութիւններով՝ հալելութուրք հաշտու-
թեան գաղափարն իսկ կը վարկաբեկեն եւ քա-
ղաքական բախտախճորութեան ու արկա-
ծախճորութեան սոսկական պատեհութեան մը
կը վերածեն առիթը:

Չենք զարմանալ, որ թրքական պետու-
թիւնը ուղղակի կամ անուղղակի իր հովանա-
ւորութիւնը կը շնորհէ Գնամ Գախաձեռնու-
թեան: Եւ ինչո՞ւ ոչ: Ծիշող այն պահուն, երբ
Հայկական Յեղափոխութեան միջազգային
ճանաչումի ալիքը թափ հաւաքած է, ծովամույն
եղողի օրինակով Անգարա ամէն պատճառ ու-
նի փարելու իրեն հրաժանած փրկարար որե-
ւէ պարանի կամ յատի...

Աւելի՜ն. յատկապէս Հայաստանը Գերկա-
յացնելու յաւակնութեամբ «Յանձնախումբ»ին
մասնակցող-Գախաձեռնող ՀՀԾականները
առաջին անգամ չէ. որ Հայ Դատի պաշտարին
եւ հայկական պահանջատիրութեան կը փոր-
ձեն կոնակէն հարուած հասցնել՝ իշխանու-
թեան գլուխ գալու կամ իշխանութեան դիրքեր
պահպանելու իրենց միակ օրակարգին այս
կամ այն խնդիրը լուծելու Գկատակով: 1989էն
իսկ, իշխանութեան գլուխ գալու իրենց առա-
ջին քայլերու ընթացքին, փանթութիւնը փո-
փոխած իբրեւ «խրտուիլակ» լուրջի չառնե-
լով, անոնք անգնահատելի ծառայութիւն մա-
տուցեցին Թուրքիոյ՝ Եւրոպական Խորհրդա-
րանի 1987ի «Հայկական Հարցի քաղաքական
լուծում մը» հայանպաստ բանաձեւ-որոշումին
դէմ պարզելով «հալելութուրք բարի-դրացնու-
թեան» իրենց կասկածելի դրօշը...

Տարբեր ծառայութիւն չէ այսօրուան Գախա-
ձեռնութիւնը, որ 1998ի իշխանափոխութենէն
ասդին Հայաստանի իշխանութեանց արտա-
քին քաղաքականութեան մէջ Հայ Դատի ի
Գկատար արձանագրուած ողջունելի շրջադար-
ձը կոնակէն որաշուհաբարելու ՀՀԾական վար-
քագծի Գորայայտ դրսեւորումն է:

Տարբեր մղումներով ու հաշիւներով
կ'առաջնորդուի, բայց ի վերջոյ միեւնոյն ջա-
ղացքին ջուր հոսեցնելու Գկատակին կը ծա-
ռայէ *Արմինիըն Էսեմպլի*ի մասնակցութիւնը.

Խմբագրական «ԳՐԾԱԿ»ի

Շաբ.ը՝ էջ 8

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԱՐԳԱՆԱՅ ՄՏԱՀՈԳԻԶ ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ»

Կ'ԸՍԵ ՄԱԿԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Հայրենի «Ազգ» օրաթերքը թարգմանաբար
ճերկայացուցած է Փարիզի մէջ լոյս տես-
նող «*La Lettre de L'UGAB*» շաբաթաթերքէն քաղ-
ւած սեռային հարցերու զարգացման մասին ՄԱ-
Կի 2001 թուականի տեղեկագիրէն հատուած մը,
որ կը վերաբերի Հայաստանի մէջ մարմնավա-
ձառութեան երեւոյթին: Ըստ տեղեկագիրին, մարմ-
նավաճառութեան մտահոգիչ կերպով տարածուիլը
ուղղակիօրէն առնչուած է Հայաստանի տնտե-
սական եւ ընկերային վիճակի վատթարացման
հետ:

Հայաստանի իշխանութիւններուն եւ մանաւանդ
բարեսիրական ու մարդկային իրաւանց պաշտ-
պան կազմակերպութիւններուն համար օրուան
իրատապ հարցը պէտք է դառնայ այս մտահոգիչ
ու ամօթալի երեւոյթին կանխարգիլումն ու վե-
րացումը: Այս պատասխանատուութիւնը կը ծան-
րանայ յատկապէս կիներու իրաւունքներու պաշտ-
պանութեան, անոնց դատարարութեան ու բա-
րօրութեան նուիրուած կազմակերպութիւններու ու-
սերուն: Պատիւի, ազգային արժանապատուու-
թեան ու աւանդական արժեքներու վերակենդա-
նացումով, ինչպէս Գաւե Հայաստանի կիներու
տնտեսական բարօրութեան Գկատող ու դատ-
արակազական յատուկ ծրագիրներու տեղեւո-
մով թերեւս կարելի ըլլայ եթէ ոչ ամբողջովին
չէզոքացնել, ապա գէթ մասամբ վերացնել հայ
կիները մարմնավաճառութեան մղող մթնոլորտը
եւ պայմանները:

Հայաստանի մէջ այս
չահուածքներու առուեսու-
րին տարողութիւնը սեր-
տօրէն առնչուած է երկ-
րին տնտեսական վիճա-
կին հետ, ինչպէս նաեւ
մաս կը կազմէ կազմա-
կերպուած երեւոյթնե-
րուն: Երկրին մէջ մարմ-
նավաճառութիւնը կը
զարգանայ մտահոգիչ
ստորոգութեան: Ան-
կասկած ընկերային
ծանր իրավիճակը, գոր-
ծադրութիւնը եւ աղքա-
տութիւնը կը նպաստեն
ընկերային այս երեւոյ-
թին տարածման: Երեւա-
նի մէջ մարմնավաճա-
ռութիւնը բացարձակ
իրականութիւն է, որ այ-
լեւս չի կրնար լուծութեան
մատնուիլ:

Մարմնավաճառները
կը բաժնուին երեք խումբ-
րի՝ վերնախաւի, միջին եւ
փողոցային: Վերնախաւի
մարմնավաճառներուն
տարիքը 20-30ի միջեւ է եւ
անոնք կը կազմեն մարմ-
նավաճառներուն 2-3 առ-
հարիւրը: Անոնք ունին
միայնակ յաճախողներ,
օրական 2-3 հատ՝ 100 եւ
աւելի տոլարի արժէքով:

Անոնք կը բնակին Երե-
ւանի կեդրոնական
շրջանները, ունին ինք-
նաշարժ, բլիթային հեռա-
ձայն եւ այլին: Անոնց մե-
ծամասնութիւնը համալ-
սարանական է: Զանոնք
կարելի է գտնել գիշերա-
յին գրօսարաններու, ճա-
շարաններու, խոյովայ-
րերու եւ այլ վայրերու
մէջ՝ յաճախողը փնտռե-
լու ընթացքին: Կաշխա-
տին առանձին կամ միջ-
նորգով, իսկ յաճախող-
ներուն հետ կապը կը
պահպանեն հեռաձայնե-
րու միջոցով: Իւրաքան-
չիւր յաճախողի համար
միջնորդները մարմնա-
վաճառներէն կը ստանա-
նկարներ 30-50 առ հա-
րիւրը: Փողոցային մարմ-
նավաճառները 18-50 տա-
րեկան են, եւ անոնցմէ
ոմանք յաճախողին հետ
«կաշխատին» 1.5-2 տո-
լարի փոխարէն:

Այս երեւոյթին յաճախ
կարելի է հանդիպել փո-
ղոցներուն մէջ: Յաճախ
կ'ենք կամ երիտասարդ
ղիլիկներ ճամբան քա-
լած ատեն նշաններով
առաջարկ կը ներկայաց-
նեն վարսողներուն:

Հայաստանի մայրա-
քաղաքին մէջ մարմնա-
վաճառութիւնը այսօր
յայն տարածում ստացած
է տարւո տարիներէ ի վեր՝
գրօսավայրերու ի յայտ

գալէն ետք: Այս երեւոյ-
թին ետին կանգնող
ըրդպատմաճառը թէ՛
մարմնավաճառներուն
եւ թէ՛ անոնց աներեւոյթ
հովանաւորներուն հա-
մար դիւրին ձեւով դրամ
շահիլն է: Երկրին տնտե-
սութեան զարգացման
միջոցները ոչ մէկ արմա-
տական յառաջդիմու-
թեան յոյս կը ներշնչեն
թէ՛ քաղաքներուն եւ թէ՛
գիւղերուն մէջ:

Ըստ Հայաստանի ներ-
քին գործող նախարա-
րութեան տեղեկներուն,
ոստիկանութիւնը արձա-
նագրած է 1200 մարմնա-
վաճառ, սակայն իրակա-
նութիւնը պաշտօնական
տուեկաներէն շատ աւե-
լին է: Մարմնավաճառու-
թիւնը քաղաք կ'առաջ-
նորգէ բազմաթիւ երի-
տասարդ, անուս աղջիկ-
ներ ու կիներ, որոնք գիւ-
ղէն կու գան իրենց
մարմնին միջոցով դրամ
շահիլուն:

Բազմաթիւ մարմնա-
վաճառներ, որոնք ծա-
ռայութիւն կ'առաջար-
կեն քանի մը տասնեակ
Ֆրանքի փոխարէն, կը
յաջողին հազիւ իրենց
ապրուստը ապահովել
հակառակդապահակա-
նայիններու մէջ: Հայ
մարմնավաճառներուն
կէսէն աւելին գիւնեմու-
ներ, թմրամոլներ եւ շատ
յաճախ անգիտակցարար
սեռային հիւանդութիւն-
ներ տարածողներ են:
Անոնք կը վարակեն
իրենց յաճախողները,
իսկ այս վերջինները՝
իրենց կիները: Մարմնա-
վաճառներուն 47 առ հա-
րիւրը իրենց ամուսինն
բաժնուած կ'ենք են, 21
առ հարիւր՝ ամուսնա-
լուծուածներ, 12 առ հա-
րիւրը ամուսնացած չէ եւ
62 առ հարիւրը գաւակ-
ներ ունին:

Հայաստանի մէջ
մարմնավաճառութիւնը
չափազանց մտահոգիչ է,
քանի որ հետզհետէ

կ'ընդգրկէ մեծ թիւով
պարմանուհիներ: Մարմ-
նավաճառներուն 2 առ
հարիւրը 18 տարեկանէն
վար են, իսկ ոմանք 14
տարեկան են: Արտա-
սահմանի մէջ աշխատե-
լու հեռանկարով հրա-
պուրուած հայուհիներ
մէն միջոցի կը դիմեն
անցադրի ունենալու հա-
մար եւ կը յայտնուին հա-
սարակաց տուններու մէջ:
Նախապէս ծրագրուած
կերպով չուրջ 500 հայու-
հիներ իրենք գիւնեք
գտած են Արարական
Միացեալ էմիրութիւննե-
րու մէջ: Միջնորդները կը
հաւաքեն ապագայ
մարմնավաճառները եւ
գանոնք կ'ուղարկեն Տու-
սայ՝ իրենց ծանօթ միջ-
նորդներու՝ անոնցմէ իւ-
րաքանչիւրին համար
ստանալով 300-500 տո-
լար: Տուսայ հասնելէն
անմիջապէս ետք երիտա-
սարդ կ'ինքնէն կ'առնեն
անոնց անցադիրները եւ
կը ստիպեն մարմնավա-
ճառութիւն կատարել:
Երբեմն պանոնք կատարի
կերպով կը ձեռնեն եւ մի-
շեւ իսկ կ'ահարեկեն: Իւ-
րաքանչիւր մարմնավա-
ճառ կ'ընդունի 10-30 յա-
ճախողներ, որոնք 10
վայրկեանի համար կը
վճարեն 30-35 տոլար (մէկ
թամբ՝ 150-200 տոլար):
Մէկ-երկու ամիս ետք
մարմնավաճառը կը նկա-
տէ, որ ինք ոչինչ կամ
գրեթէ ոչինչ կը շահի եւ
կը սկսի ընդմիջմանայ:
Ան զորձեալ ձեռի կ'են-
թարկուի, մինչեւ որ վի-
զայի պայմանաժամի
հարց ծագէ: Մարմնավա-
ճառը 6-9 ամիս բան-
տարկուելէ ետք առանց
դահեկանի դուրս կը
դուրի Արարական էմի-
րութիւններէն:

Թուրքիոյ մէջ մարմ-
նավաճառութիւն կը կա-
տարեն 5000 հայուհիներ:
Հայաստանի մէջ սու-
ղանքներու դրութիւնը
ոչ մէկ ազդեցութիւն
կ'ունենայ մարմնավա-
ճառութեան վրայ:
Մարմնավաճառները
վարժուած են վարչական
պատիժներուն: Նկատի
ունենալով երեւոյթին
արագ տարածումը, ներ-
քին գործող նախարա-
րութիւնը միջոցներ ձեռք
առած է յատկապէս Երե-
ւանի հաւաքական վայ-
րերու մէջ մարմնավաճա-
ռութիւնը նուազեցնելու
համար: Կանոնաւոր կեր-
պով ստուգումներ կը
կատարուին փողոցնե-
րուն եւ հանրային վայ-
րերուն մէջ:

Մարմնավաճառու-
թիւնը կանխարգիլելու
համար պէտք է թէ՛
դատարարակազական եւ
թէ՛ ընկերային առումնե-
րով պայմար մղել: Մա-
րմնայն արուորը կարելի
չէ իրագործել, այնքան
ատեն որ Հայաստանի
տնտեսական ու ընկերա-
յին իրավիճակը կը ներ-
կին կապեն նոյն պատկերը:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգային»ի մէջ
որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը
խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք
հասցնեն հրատարակման թուականէն առնուագն օր
մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻՆ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՋԴՆԵՐԸ Բացառութիւն են: Մահագ
կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն
հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԿԵՂԾԻՔԸ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ԵՒ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԳԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՐՁ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ

Յուլիսի 13ին «Հայ - Թրքական հաշտեցման յանձ-
նախմբի» միտումներին անդրադառնալիս «Ազգ»ը,
հիմք ընդունելով դրա հիմնադրի անդամներից Օզտեմ
Սանպերի «նպատակն ոչ թէ ճշմարտութիւնը գտնելն
է, ապագայի նոր հորիզոններ բացելն ու փոխմըն-
նումները խորացնելը» խօսքերը, կարծիք էր յայտնել,
թէ կեղծիքը որպէս «ապագայի նոր հորիզոններ բա-
ցելու» նախապայման գերադասելի է դառնում
ճշմարտութիւնից, իսկ փոխմընումն խորացումը
ենթադրուած է Հայոց ցեղասպանութեան ուրացման
հարցում աջակցել թուրքերին:

Վերոյիշեալ կարծիքը հիմնաւորուել է թուրքիայի
արտաքին գործող նախարարութեան «Պատմութեան
հետ հաշտուելու եւ իր հարեւանների նկատմամբ
թշնամական քաղաքականութիւնից հրաժարուելու»
կոչով, որը Նոյեմբերի 13ին ուղղուել էր Հայաստա-
նին: Դրան էր հետեւել Նոյեմբերի 22ին նոյն նախա-
րարութեան մշակած եւ կառավարութեան քննարկ-
մանը ներկայացրած «Հայկական հարցի չէզոքաց-
ման» նախագիծը: Սա նոյնպէս կարեւոր փաստ է, սա-
կայն վերոյիշեալ կարծիքի հիմնաւորման առումով
առաւել կարեւորը թուրքիայի Ազգային մեծ ժողո-
վի՝ Մեհլիսի արտաքին յարաբերութիւնների յանձ-
նախմբի Փետրուարի 21ին ընդունած օրինագիծն է,
որը պաշտօնապէս դատապարտում է Հայոց ցեղաս-
պանութեան ճանաչումը:

Թուրքիայի արտաքին գործող նախարարութեան
վերոյիշեալ կոչն ու «Հայկական հարցի չէզոքացման»
նախագիծը, ինչպէս նաեւ Մեհլիսի խնդրող առարկայ
օրինագիծը, ոչ մի կասկած չեն յարուցում Հայոց ցե-
ղասպանութեան հարցը համաշխարհային հանրու-
թեան ուշադրութիւնից դուրս մղելու, դրա միջազ-
գային ճանաչումը խոչընդոտելու համար միջոցների
մէջ խտրութիւն չդնելու թուրքիայի վճռականու-
թեան մասին:

«Հայ-թրքական հաշտեցման յանձնախմբի» ստեղ-
ծումն այս առումով պատահական չէ: Հարկ է սա-
կայն նշել, որ տուեալ դէպքում խօսքը սոսկ քաղա-
քական միջոցառումների չի վերաբերում: Թուրքե-
րը Հայոց ցեղասպանութեան հարցը քաղաքական
ոլորտից ակադեմական ոլորտ տեղափոխելու
նկրտումներով նոյնիսկ չեն խորշում քաղաքակա-
նացնել զիտական միջոցառումները: Դրանք նպաս-
տում են թրքական կեղծիքի քաղաքականացմանը:
Այս պայմաններում կեղծարարութիւնն ակամայ վե-
րածուել է քաղաքականութեան:

Հայոց ցեղասպանութեան կեղծարարութիւնը
թուրքիայում վարուել է պետական քաղաքականու-
թիւն դարձել: Ինչ վերաբերում է թրքական կեղծիքի
քաղաքականացմանը, ապա նոր չեն նաեւ դրա փոր-
ձերը: Սակայն այս փորձերին Մեհլիսի անմիջական
մասնակցութիւնը համեմատաբար նոր երեւոյթ է:
Դրանում համոզուելու համար կարելի է անդրադառ-
նալ Յունիսի 27ին թուրքիայի Ազգային մեծ ժողովի
հանրապետական նախկին Մերակոյտի սրահում կազ-
մակերպուած շնորհանդէսին: Դրա համար առիթ էր
ծառայել օրենք Մեհլիսի հովանաւորութեամբ անգ-
լերէնով հրատարակուած «Հայեր օսմանեան վերջին
շրջանում» ժողովածուն: Յունիսի 29ին «Ակօսը», տե-
ղեկացնելով այդ մասին, շակերտների մէջ ընթերցո-
ղին տեղեկութիւն է պահում, որ վերքը հրատարակուել է
«Թուրքիայի Հանրապետութեանը եւ ժողովրդին
ուղղուած մեղադրանքները պատմական ճշմարտու-
թիւնները լոյսի տակ դիտական փաստարկներով հեր-
քելու» նպատակով:

Ըստ «Ակօսի» շնորհանդէսին մասնակցել են
թուրք պետական գործիչները, թուրքիայում հաւա-
տարմադրուած գիււնագիտական առաքելութիւննե-
րի ներկայացուցիչները, տարբեր համալսարաններից
խնդրին առնչուող բաժանմունքների տնօրէնները,
թրքական սլամական ընկերութեան անդամներն ու
ինչպէս թուրք, այնպէս էլ օտարերկրեայ մամուլի
ներկայացուցիչները:

Շնորհանդէսին ելոյթ է ունեցել թուրքիայի Ազ-
գային մեծ ժողովի նախագահ Էօմէր Իպկին՝ ընդգծե-
լով. «Գիրքը գալիս է փաստելու, որ թուրքերը հայե-
րի նկատմամբ ցեղասպանութիւն չեն գործել»: «Հա-
յեր օսմանեան վերջին շրջանում» ժողովածուն հրա-
տարակութեան է պատրաստել թրքական պատմա-
կան ընկերութիւնը, իսկ Մեհլիսի մշակոյթի, արուես-
տի ու հրատարակման

Միջապգային Քաղաքական Կեանք

Կասպից Ծովու արեւելեան ափին գտնուող Կեդրոնական Ասիոյ հեռաւոր եւ անբարեբեր տարածքը հարիւր տարի առաջ աշխարհի քաղաքական մրցակցութեան զխաւոր տարածքներէն մէկը հանդիսացաւ:

19րդ դարու վերջերուն աշխարհի երկու մեծ ուժերը՝ Բրիտանիան եւ Ռուսական կայսրութիւնը, գրեթէ պատերազմ պիտի մղէին այդ անձանօթ շրջանին համար, մինչ առաջինը կը ջանար պաշտպանել արքայական իր թաղին գոհարը՝ Հնդկաստանը, իսկ երկրորդը անվարան կ'արշաւէր դէպի հարաւ:

Անոնցմէ ոչ մէկը քարտէսներ կամ որեւէ ձեւի կապ ունէր իրիւր, Պուխարա կամ Սամար-դանտ կոչուող պետութիւններուն հետ: Բրիտանիան վստահ չէր, որ Հնդկաստանը կրնար պաշտպանել հիւսիսէն եկող ռուսական յարձակումի մը դէմ, իսկ Ռուսիա, որ ամբողջ դարուն ընթացքին սլաւական իր հայրենիքէն դէպի հարաւ (Կովկաս եւ Կասպեան շրջան) եւ արեւելք (Ասիա) ընդլայնիլ կը փորձէր, վստահ չէր, որ Հնդկաստանի վրայ յարձակում մը գործնականօրէն կարելի էր:

Հետեւաբար երկու կողմերէն գործողութեամբ լրտեսներու, արկածախնդիրներու եւ գինուորականներու խումբեր սկսան մէկ դար տեւող հետախուզական եւ դիւանագիտական Մեծ Խաղի մը՝ այդ հսկայ շրջանին ծանօթանալու եւ անոր դեկավարները իրենց ազդեցութեան ենթարկելու համար:

Հնդկաստան երբեք յարձակումի չենթարկուեցաւ եւ տակաւին յստակ չէ, թէ Ռուսիա այդպիսի թշնամական մտադրութիւն ունէր օրին: Սակայն ռուսական կայսրութիւնը կամ անոր յաջորդ խորհրդային Միութիւնը յաղթական դուրս եկաւ այդ խաղէն:

1917ի համայնապարական յեղափոխութենէն անմիջապէս ետք Ղազախստան, Խորհրդաստան, Տաճիկիստան, Թուրքմենիստան եւ Ուզպեքիստան կոչուող երկիրները մտան Խորհրդային Միութեան սահմաններէն ներս, նոյնը ըրին Կասպից Ծովու միւս ափին գտնուող Վրաստանը, Հայաստանն ու Ազրպէյճանը:

Սակայն այսօր Խորհրդային Միութիւնը ոչ եւս է, այդ ուժ երկիրները անկախացած են, անոնց քաղաքական եւ առեւտրական հակումները տակաւին անորոշ են, եւ Մեծ Խաղը վերսկսած է:

ԱՆՍ ՔԱՐԻՒՂ

Մրցակից ուժերը այսօր փոխուած են. փոխւած է նաեւ մրցանակը, որ քարիւղն է. մեծ քանակութեամբ քարիւղ: Կասպեան շրջանը աշխարհի չպեղուած հանքերուն մեծագոյններէն է, եւ աշխարհի քարիւղի մեծագոյն ընկերութիւնները այժմ կը գրադին անոր պեղումով, քարիւղի արտադրութեամբ եւ արտածումով:

Ազրպէյճանը, որ հարիւր տարի առաջ աշ-

ԲՈՒՈՐԸ Կ'ՈՒՁԵՆ ՅԱՂԹԱԿԱՆ ԴՈՒՐՍ ԳԱԼ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻՈՅ ՄԵԾ ԽԱՂԵՆ

Խարհի քարիւղին կէսին արտադրողն էր, այժմ առաջնակարգ դիրքի վրայ է ներդրողներ եւ իր քարիւղի հանքերը օգտագործողներ գրաւելու ջանքերուն մէջ. նոյն աշխատանքը կը տանի նաեւ Ղազախստան, որ հաւանաբար բոլորէն աւելի քարիւղ ունի:

Սակայն այդ երկիրները կը գտնուին պոչ շրջանի մը մէջ, այլ խօսքով՝ իրենց քարիւղը սպառողական շուկաներ հասցնելու համար անոնք կարիքը ունին այլ երկիրներու յարձակումներէն անցնող քարիւղատարներու: Այդ մէկը ուժ եւ ազդեցութիւն կ'ենթադրէ եւ հոս է, որ մեծ երկիրները կը միջամտեն: Այսպիսով, մեր առջեւ այդ խաղին մէկ նոր տարբերակը կը պարզուի:

Միացեալ Նահանգները, որոնք աշխարհի քարիւղի մեծագոյն օգտագործողն են, ունին իրենց նախնարած քարիւղատարի դիմը, որ Կասպից Ծովէն դէպի արեւմուտք երկարելով՝ կ'անցնի Ազրպէյճանէն, Վրաստանէն, Օթմանի զաշնակից Թուրքիայէն եւ կը հասնի մինչեւ Միջերկրական, այսպիսով նուազեցնելով Պարսից Ծոցին եւ Ռուսիոյ կարեւորութիւնը: Ուաշինկթըն նոյնիսկ նշանակած է Կասպեան ուժանիւթի դիւանագիտութեան յատուկ հիւպատոս մը՝ Սթեֆըն Սան, որ վերջերս Արմանի մէջ յատակէն յայտարարեց, որ «Պուշի վարչակազմը ամբողջովին նեցուկ կը կանգնի Արեւելք-Արեւմուտք ուժանիւթի միջանցքին»:

Ռուսիա, որ 1980ականներուն աշխարհի մեծագոյն քարիւղ արտադրողն էր, իր կարգին նոյնանման պաշտօն մը տուած է ուժանիւթի նախկին նախարար Վիքթոր Քալեուսինի՝ Կասպեան քարիւղի արտահանման իր նպատակները պաշտպանելու համար:

Ցարը Ռուսիա աւելի առաջնակարգ դիրքի վրայ է խաղին մէջ. Խորհրդային Միութեան փլուզումէն ի վեր Կասպեան քարիւղը միջազգային շուկաներ հասցնող նոր կառուցուելիք քարիւղատարը Ղազախստանի թեմակից քարիւղի հսկայ հանքէն կը հասնի Ռուսիոյ Սեւ Ծովեան նոսրոսիսք նաւահանգիստը:

Արտահանուող քարիւղը արդէն իսկ կը հասնի քարիւղատարին մէջ եւ նոսրոսիսք կը հասնի 8 Օգոստոսին: Այս իմաստով զգուհ է Թուրքիան, որ կը վախնայ, թէ նաեւ իսկ հսկայ տրամիղ մը պիտի խճողէ արդէն իսկ շախմատից բանուկ Վոսփորի նեղուցը եւ պիտի վտանգէ Պոլիսը:

Հարաւոր տնտեսող Իրանը իր կարգին կ'ուզէ, որ քարիւղը անցնի իր տարածքներէն եւ

կը ծանուցէ աւելի կարճ եւ նուազ ծախսայից դիմը մը, որուն միջոցով քարիւղը պիտի հասնի Պարսից Ծոց, որ ասիական շուկաներուն համար շատ աւելի լաւ դիրք կը վազելէ, քան Միջերկրականը:

Զինատան եւս ներառուած է խաղին մէջ եւ դէպի արեւելք ուղղուող քարիւղատարներ կը փնտռէ ուժանիւթի իր պահանջները բաւարարելու համար: Փաքիստանն ու Հնդկաստանը կ'ուզեն տեսնել դէպի հարաւ իջնող քարիւղատարներ, բայց որովհետեւ այդ մէկը կը պահանջէ տաղնապներով եռացող Աֆղանիստանի կտրելը, այդ յույսերը շատ հեռու կը թուին ըլլալ:

ԽՈՐՀԱՐԿԱՆ ԳԱՋԱԽՆԵՐԸ

Ղազախստանը, որ տարածութեամբ կը հաւասարի Արեւմտեան Եւրոպային եւ նախկին Խորհրդային երկիրներէն առաջինն էր, որ քարիւղի շնորհիւ հարստանալու նշաններ ցոյց տուաւ, գոյուշօրէն կը խուսափի ինքզինք սրեւէ մրցակից իսումրի մէջ ներկայացնել եւ կը նախընտրէ սպասողական վիճակի մէջ մնալ:

«Վերջ ի վերջոյ քարիւղը պիտի երթայ չորս ուղղութիւններով», նշեց Ղազախստանի արտաքին գործոց նախարար Եւրալ Իտրիսով: Ան զիտել տուաւ, որ՝ «Ղազախստան մեծապէս հետաքրքրուած է կարելի եղածին չափ մեծ թիւով քարիւղատարներով: Այս իմաստով Ղազախստան շատ գործնական է, մենք չունինք քաղաքական որեւէ նախապաշարում»:

Սակայն վարչապետը ակնարկութիւն րաւ իրանեան տարբերակին հետ աւելուող կարգ մը հարցերու: «Իրանեան դիմը, մասնազգաներու համաձայն, տնտեսական առումով շատ գործնական է... միեւնոյն ատեն շատ յստակ է, թէ Ուաշինկթըն բացառական կեցութեամբ ունի այդ ծրագիրին նկատմամբ: Ղազախստան անշուշտ այդ կէտը նկատի պէտք է առնէ», նշեց Թուրքիան:

Խաղը չի վերաբերի միայն քարիւղին: Կեդրոնական Ասիան այն շրջանն է, ուր անհաւատ Խորհրդային Միութիւնը սահման մը ունէր իսլամ ծայրադեպականութեան կեդրոն նկատուող Իրանի եւ Աֆղանիստանի հետ: Իսլամութիւնը վերաշխուժացում ապրեցաւ նորանկախ պետութիւններուն մէջ (յատկապէս

Ուզպեքիստանի) եւ քարիւղի մրցակիցներ Մոսկուան եւ Ուաշինկթընը կը միանան ծայրադեպականութեան տարածման իրենց վախին մէջ:

«Ցատակ նշաններ կան, որ ռուսերը նախագահ Փութինի պաշտօնի ստանձնումէն ի վեր կ'ուզեն դարձեալ միաճուրկ կեդրոնական Ասիոյ հարցերուն մէջ», նշեց արեւմուտքի դիւանագէտ մը Ալմաթիի մէջ: «Ապահովութեան եւ իսլամ գինեալներուն սպառնալիքին պարագային արեւմուտքը մեծ օգտակարութիւն չի կրնար ցուցաբերել: Ռուսիա կրնայ իր ազդեցութիւնը վերականգնել գործնական օժանդակութիւն հայթայթելով, օրինակի համար՝ գէն-թեր տրամադրելով», աւելցուց դիւանագէտը:

Զինատան նաեւ կը վախնայ իսլամութեան տարածումով. ան նաեւ կը վախնայ քարիւղ արտադրող երկիրներու մէջ Միացեալ Նահանգներու ազդեցութեան հզօրացումով, եւ այդ պատճառով ան Ռուսիոյ եւ կեդրոնական ասիական չորս երկիրներուն միացաւ ստեղծելու համար Շանկհայի Համագործակցութեան Կազմակերպութիւնը՝ նպատակ ունենալով շրջանին մէջ պաշտպանել եւ յառաջ տանելու իր շահերը:

Կեդրոնական Ասիան հետզհետէ կը դառնայ թմրեցուցիչի աշխարհի մեծագոյն տարանցիկ համար: Ղազախստանի արտաքին գործոց նախարար Իտրիսովին համաձայն, Աֆղանիստանէն եկող Կերոյի կ'անցնի նախկին Խորհրդային երկիրներէն՝ հասնելու համար Ռուսիա եւ Եւրոպա: Աֆղանիստան այսօր Կերոյի արտադրութեան աշխարհի թիւ 2 երկիրն է: Թմրեցուցիչը հսկայական գումարներ կը հայթայթէ ծայրայեղ իսլամական խմբակներուն, որոնք սադնապալի Տաճիկիստանէն տարածուած են եւ վերջին տարիներուն պատերազմ կը մղեն Կեդրոնական Ասիոյ կառավարական ուժերուն դէմ աւելի եւս սաստկացնելով շրջանի ապահովութեան չուրջ բարձրացած մտահոգութիւնները:

19րդ դարու Մեծ Խաղի փառքի օրերէն ետք, երբ Կեդրոնական Ասիոյ հարցերը երբեք չէին բացակայել Ս. Փեթերսպուրկի եւ Լոնտոնի թերթերու էջերէն, շրջանը լծացած վիճակ մը ապրեցաւ Խորհրդային վարչակարգի անցնող 70 տարիներուն: Սակայն այդ օրերը վերջ գտած են արդէն. խաղը վերսկսած է:

ՍԵՊԱՍԹԻԱՆ ԷԼԻՍՈՐ

(ՌՈՅՈՒՐԸ)

ՇԱՐԵՑԵՔ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԵՔԱԻՈՐ ՆՈՒԵՐՆԵՐ

Win up to \$15,000 in prizes

Peugeot 206
Trip to Cyprus for 2 persons (6 nights)
2 FUJITSU air condition
2 General Electric washing machine
Sony HI FI DX5
Philips DVD 711 with zoom
Panasonic TV 21 inch
Sony TV 21 inch
Continental oven



ԽՆԴՈՒՔ, ԱՐՑՈՒՆՔ, ՄՏԱԾՈՒՄ...

ՄԱՐՍԷՅՅԻ ԲԵՍԱՂԴԻՉ ՈՂՊԵՐ ԿԵՏԻԿԵԱՆ ԿԸ ՇԱԽՏԱՅ, ՈՐ՝ «ԱՐՈՒԵՍԸ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՅ ԲԱՆ ՄԸ, ՈՐՈՒՆ ՄԱՍԻՆ ՄԱՐԴԻԿ ԿԱՐԵՆԱՆ ԽՕՍԻԼ ԿԵՐՋԸ»։ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ «ՏԻ ԻՆՏԻՓԵՆՏՆԸ» ԹԵՐԹԻՆ 8 ՅՈՒՆԻՍԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԻՒՆ ՄԵՋ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԴՈՒԱԾ ՄԸ ԿԸ ՆԵՒ ԱՐՈՒԵՍԱԳԵՏԻՆ ՇԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Մտածեց՞ք Ֆրանսական շարժապատկեր-րի մասին եւ Ռուսէյր Կէտիկեանի անու-նը արագ կամ դիրքութեամբ չէ՞ք կրնար յիշել: Մակայն ան Ֆրանսայի ամէնէն յարգուած եւ տաղանդաւոր բեմադրիչներէն է: Ան հաւա-սարապէս կը սիրէ երեւակայական կատակեր-գութիւնը եւ աշխատաւորներու կեանքին դա-ժան իրականութեան պատկերումը, արեւաշող վիպերգութիւնը եւ ընկերային ծաղկումը: Անոր նախասիրած բեմադրիչներն են Լոշ եւ Ֆասպիլնտէր, Փաստիւրի եւ Մորէթթի: «Ժա-պաւէն կը պատրաստեմ միայն զայդպիսիներ առաջադրելու համար, կը բացատրէ ան, աշ-լապէս երբեք շարժապատկերի մէջ պիտի չաշ-խատէի»: Արուեստը պէտք է ըլլայ բան մը, որուն մասին մարդիկ կարեկան խօսիլ վերջը»։ Մակայն Կէտիկեան նաեւ խորապէս պար-տական կը զգայ մարտկոյցի արուեստագէտնե-րու, ինչպէս՝ Տեյրիսակ-րեմադրիչ Մարսէյ Փանիոլի, Ֆրանսական արուեստի Ժողովրդա-յին ճակատի յորդուն իրապաշտութեան եւ Ժան Ռրնուարի ու Ռրնէ Քլէրի ժապաւէննե-րուն: Փանիոլի «Մալրիսու. Ֆալիլ. Սեզար» եւ-եակին կամ Ռրնուարի «Լը քլիմ տը մէօսիկօ Լամի» եւ «Լը ոնկլ տիւ մէօ» ժապաւէննե-րուն նման Կէտիկեանի գործերը կ'արտադր-լեն րանաստեղծական մարդասիրութեան գոտւ Ֆրանսական անակոսութիւնը:

Կէտիկեանի ըրոր մապաւէնները տեղադրը-ւած են Մարսէյի կամ աշխատաւորներով բնակուած մօտակայ Լ'Էսթաք նաւահանգիստ քաղաքին մէջ, ուր ծնած եւ հասակ նետած է ան: Բոլորն ալ կը պատմեն սովորական մար-դոց մասին, որոնք կը զիմագրաւեն առօրեայ դժուարութիւններ, ինչպէս՝ անգործութիւն, ցեղային խտրականութիւն, իրաւաբուծութիւն եւ բոլորն ալ կը փնտռեն հաճոյք ու սիրային արկածախնդրութիւն: Նոյն գերասանները կ'երեւուն տարբեր ժապաւէններու մէջ, որոնք գլխաւոր դերակատարն է Կէտիկեանի կինը՝ Արիան Ասքարիտ: Մակայն այստեղ կ'աւար-տի տիպարներուն նմանութիւնը:

Ցարդ Կէտիկեանի ժապաւէններէն միայն երկուքը ցուցադրուած են Բրիտանիոյ մէջ. վիպերգական հաճելի կատարողութիւն մը՝ «Մարիուս Է Ժամէք» եւ «Ա լա փլա տիւ քօր» ժապաւէնը, որ կը պատկերէ տարբեր ագ-գութիւններու պատկանող ամուրի մը դիմագ-րուած դժուարութիւնները (ժապաւէնը հիմ-նուած է ամերիկացի սեւամորթ գրագէտ Ճէյմս Պոլտոսիին կեանքին վրայ): Մակայն յառաջի-կայ երկու ամիսներուն պիտի ցուցադրուին երկու այլ ժապաւէններ. «Ա յարաք» եւ «Լա վիլ Է քրաքքիլ»։ Այս երկուքը տպաւորիչ Կեր-պով կ'արտացոլացնեն բեմադրիչին լայն տե-սադաշտը:

«Ա յարաք»ը հեգնական կատակերգու-թիւն մըն է ժապաւէնի բնագիրներ պատրաս-տող երկու գրագէտներու մասին, որոնք կը հիւսեն փակուելու փտանգը զիմագրաւող կա-ռատան մը պատմութիւնը: Անոնք միաժամա-նակ հետաքրքրական եւ ուսուցողական, տրա-

մաբանական եւ զօտեպնդող դիպաշար մը զարգացնելու իրենց ճիպին մէջ կը փորձարկեն խալտարղէտ գաղափարներ. հանրատան մը տեսարանը կը վերածուի երաժշտախառն կա-տակերգութեան, փետրաւոր գլխանոցներով հնդիկներու ցեղ մը կ'արշաւէ Ֆրանսական բանակի փողոցէ մը վար: Դիպաշարի տարբեր աւարտներ վէճի նիւթ կը դառնան եւ կը մեր-ժուին: Մինչ այդ տիպարները, որոնք կը կազ-մեն ինքնաշարժ վերանորոգողներու շաղակ-րատ ընտանիք մը, պրապէտներուն հակադիշ-ուէն դուրս կու գան եւ իրենց ուզած ձեւով կ'ապրին իրենց կեանքը:

«Ա յարաք»ը Կէտիկեանի եւ երկար ժամա-նակէ ի վեր անոր հետ ժապաւէններու ընա-գիրներ պատրաստող պրպղէտ Ժան Լուի Մի-լէզլի ինքնաձայնկումն է: Ժապաւէնը ցոյց կու տայ, որ հակառակ իր լուրջ մօտեցումին թե-մադրիչը յայտնապէս յաւակնութիւններ չու-նի: «Այստեղ կը փորձեմ զիեյ այն հարցը, թէ ինչպէս կարելի է ստեղծել Ժողովրդային շար-ժապատկեր մը, որ նաեւ քաղաքական խորք ունի», Կ'ըսէ ան: «Զեմ կարծեր, որ ժապաւէ-նը այս հարցին լուծումը կ'առաջարկէ, սա-կայն գաշն կը պեղէ իապի ձեւով»։

Ի տարբերութիւն «Ա յարաք»ի՝ «Լա վիլ Է քրաքքիլ»ը Մարսէյի կեանքին մէկ որմնանը-կարն է. Կէտիկեան գայն կը նկարագրէ իբրեւ իր ամէնէն մութ եւ ձգտումներով յեղուն ժա-պաւէնը: Սկիզբի տեսարանին մէջ երկար պատկերուած են հին նաւահանգիստը եւ բլու-րի մը վրայ թառած Նոթրըմ Ծամ տը լա Կարտ եկեղեցին, որ կը հսկէ քաղաքին վրայ: Մար-սէյը երեկոյեան ոսկեփայլ յոյսին մէջ հաղուա-ղէպօրէն նոյնքան գեղեցիկ կ'երեւի, որքան Կէտիկեանի ժապաւէնին մէջ: Մակայն քաղմա-թիւ տիպարներով հիւսուած առինքնող դիպա-շարը նաեւ ցոյց կու տայ, թէ քաղաքը ինչպէս թունաւորուած է հարուստ խաւին փտածու-թեամբ եւ աղքատ խաւին թմրամոլութեամբ:

«Այս երկու ժապաւէնները գրեցի նոյն ատեն՝ ընդորշելու համար անձնական տեսլա-կանս: Հարկ է իրարու վրայ րարդել գանոնք», կը բացատրէ ՃԷ տարեկան բեմադրիչը: «Իւրա-քանչիւրը ազդուած է միւսէն, որուն իրբեւ արդիւնք՝ իւրաքանչիւրին ընդթը ճափազան-ցուած է: Կատակերգութիւնն ու ողբերգու-թիւնը աշխարհին դիմելու երկու գլխաւոր մի-ջոցներ են, եւ ան որ պատմութիւն պատմելու արուեստով հետաքրքրուած է կ'ուզէ կիրար-կել գանոնք: Կը կարծեմ, որ ասիկա նաեւ ակրի-չիւրներուն ցանկութիւնն է: Երբեմն կ'ուզեմ զարթոպատկերի սրահ երթալ պարզապէս աշ-խարհի ճակատագիրը ողբալու համար, սա-կայն յաջող օր կ'ուզեմ խնդալ եւ գտեպարնդ-ւիլ: Շարժապատկերի սրահ չեմ երթար իրա-կանութիւններ փնտռելու, այլ կ'երթամ գա-նոնք տեսնելու չըրճեմ՝ այս կամ այն ձեւով»։

Կէտիկեանի հայրը հայ էր եւ իրբեւ մեքե-նագործ կ'աշխատէր լ'Էսթաքի նաւահանգիս-տին մէջ: Մայրը գերմանացի էր, քաղաքական եռանդուն գործիչ մը: Բրիտասարդութեան սե-

մին Կէտիկեան երբեք շարժապատկերի աշ-խարհին մէջ գործելու կոչում չէր զգացած: Ան մադիստրոսի իր աւարտաճառը նուիրած էր «1895էն 1914ի միջեւ ծաւալած աշխատաւորա-կան շարժումին եւ անոր պետականութեան զաղափարի ըմբռնումին»։ Մակայն այդ ժամա-նակ ան արդէն հանդիպած էր Ասքարիտի, որ կը յաճախէ Փոռովարսի նոյն համալսարանը, ուր կ'ուսանէր ինք, եւ արդէն խոտմնալից դերասանուհի մըն էր: Կէտիկեան շարժապատ-կերի աշխարհ թափանցելու փորձութեան մատնուած էր ժապաւէնի ընագիրներ պատ-րաստող րարեկամի մը քաջալերանքով: Շրջա-նաւարտ ըլլալէ տարի մը ետք, 1980ական տա-րիներուն, Կէտիկեան լ'Էսթաքի մէջ սկսած է նկարահանել իր առաջին ժապաւէնը՝ «Տերմիէր Էքէն»։

Այդ ժամանակ Ժողովրդականութիւն կը վաղեցին «Սապուէլ»ի եւ «Տիվալ»ի նման սե-ռային ըովանդակութեամբ ժապաւէններ: Անոնք Ֆրանսայի մէջ ճանչցուած էին սինե-մա տիւ լուք անունով: Կէտիկեան համոզուած էր, որ ուժականութեամբ յատկանշուած իր համետ ժապաւէնը ոչ որի ուշադրութիւնը պիտի գրաւէր: Մակայն «Տերմիէր Էքէն»ն Քաննի փառասունիի գուզահեռ ձեռնարկնե-րուն մասնակցելու հրաւեր ստացաւ, քննա-դատներու գնահատանքին արժանացաւ եւ հա-մետ յաջողութիւն մը արձանագրեց Ֆրանսա-կան ժապաւէններու շուկային մէջ: Կէտիկեան տակաւին՝ չէր համոզուած, որ այլ ժապաւէն մը եւս կը խմորուէր իր մէջ. ան Յ տարի սպա-սեց երկրորդ ժապաւէնը մը ձեռնարկելու հա-մար: Այժմ ան արդէն 10 ժապաւէն հրապա-րակած է եւ այս ամառ պիտի սկսի պատրաս-տել իր 11րդ ժապաւէնը, զոր կը նկարագրէ իբ-րեւ «սրոյ ալներեւակային եռանկիւն մը, ըայց՝ գեղեցիկ եւ վիպերգական պատմութիւն մը»։

Բեմադրիչը կ'ապրի Փարիզ եւ կը գլխաւո-րէ ժապաւէնի արտադրութեան իր սեփական ընկերութիւնը՝ Ակաթը, որ տարին միջին հա-շուով 35 ժապաւէն կը հրապարակէ: «Շարժա-պատկերը ճարտարարուեստ մըն է եւ հիմնը-ւած է անոր վրայ», Կ'ըսէ ան քիչ մը տխուր: Մակայն Կէտիկեան տակաւին կը շարունակէ խօսիլ հարաւային Ֆրանսացիի իր հնչիւնով եւ երկրորդ բնակարան մը կը պահէ Մարսէյէն անմիջապէս դուրս պտնուող ձկնորսական գիւղի մը մէջ: Ան ամէնէն աւելի կառչած կը մնայ իր սեփական ժապաւէնները միայն իր ծննդավայրին մէջ նկարահանելու սգբուն-քին. անոր լուրջ ողբերգութիւնները տեղի կ'ունենան Մարսէյի մէջ, իսկ կատակերգու-թիւններ՝ Լ'Էսթաքի մէջ: «Զեխով առիթով մը ըսած է. եթէ կ'ուզեմ ամբողջ աշխարհ մաս-նակից դարձնել ստեղծագործութեանդ, պատ-մէ գիւղիցի մասին: Ասիկա միշտ ճիշդ է իմ պա-րագալիս»։

Բրիտանիոյ մէջ «Ա յարաք»ի բացումը տե-ղի պիտի ունենայ 20 Յուլիսին, իսկ «Լա վիլ Է քրաքքիլ»ի բացումը՝ 19 Հոկտեմբերին:

ԼԵԶՈՒԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Պըրքլիի Երիտասարդական ռատիոկայանին հաղորդավարներն Ճաքինտա Աբգարեան Զալիֆորմոյ «*Նէշնըլ Փալլիք Ռետիո*»-ին համար պատրաստած է յայտագիր մը, որուն մէջ ցաւ կը յայտնէ, որ իր հայրը հայերէն չէ սորվեցուցած իրեն: Նոյն սխալը չլրկնելու համար ան իր ամուսինին լեզուն՝ ֆրանսերէն պիտի սորվեցնէ իր զաւկին, որպէսզի մամուկը կարեմայ հաղորդակցիլ իր ազգականներուն հետ: Սակայն բազմալեզու զաւակ մը մեծցնելու անոր երագին մէջ ի սպառ կը կորսուի հայերէնը եւ անոր հետ՝ հայկական ժառանգութիւնը...: Ստորեւ բաժիններ՝

Աբգարեանի «խոստովանութենն»։

Երկու ամուս գաւակս առայժմ միայն մա-նուկներու լեզուով կ'արտայայտուի: Մակայն չեւուով ան պիտի խօսի իր ամէնէն աւելի լսած լեզուն, եւ ասիկա կը մտահոգէ զիս ու ամու-սինս, որովհետեւ կ'ուզեցնք, որ մեր մանչը բազմաթիւ լեզուներ խօսի: Հետեւաբար պիտի սկսիքք Ֆրանսերէն սորվեցնել իրբեւ երկրորդ եզուն։

Ամուսինս հասակ նետած է Փղոսկրեայ Ափունքին մէջ, կը խօսի ավորիկեան մանտին-կօ լեզուն եւ անգլերէն, սակայն կը նախընտ-րէ ֆրանսերէնը. ան դիրուսութեամբ կը կար-գէր, կը գրէ, կը մտածէ եւ կ'արտայայտուի այս լեզուով: Հետս անգլերէն կը խօսի, որով-հետեւ միակ լեզուն է, որ պիտեմ: Կը զգլժամ ասոր համար, նոյնպէս՝ հայրս։

Հայերէնը հօրս պարենի լեզուն էր: Ան սա-հուն հայերէն կը խօսի եւ կը կարդայ: Մակայն ինծի համար հայերէնը պարզապէս անհասկա-նալի է: Ամօմը կը զգամ, երբ հայեր հարց կու տան, թէ արդեօք կը խօսի՞մ լեզուն, իսկ ես հայերէնով միայն կրնամ ըսել՝ «ի՛նչպէս ես»։

Մեծնալէս ետք հայրս կը փորձէ իր մայ-րենիին հաղորդակից դարձնել զիս: Խնծի հա-մար քարտեղ չիւնած է հայերէն րառերով եւ նախադասութիւններով: Զիս հայերէնին եւ հայ մշակոյթին ծանօթացնելու համար նոյ-նիսկ հայկական դասական վէպ մը անգլերէ-նի թարգմանեց։

Ծածուկ կերպով հօրս մեղադրած եմ իր ինք-նութեան այս մասը խորհրդաւոր պահելուն համար: Հայրս կ'ըսէ, թէ ինծի եւ եղբօրս հա-յերէն չէ սորվեցուցած, որովհետեւ կը կար-ծէր, թէ պէտք պիտի չունենայինք անոր: Մայրս եւս հայերէն չէր խօսեր, հետեւաբար հօրս համաձայն, անյարմար վիճակ մը պիտի

ՄեֆԱԿԱՆ ՔՐՏԻՆՔՈՎ...
Պղնձագործ Մովսէս Կիւլէսեան 19 տարե-կանին թուրքիայէն Նիւ Եորք գաղթած է 1883ին, նոր կեանք մը սկսելու համար: Սկիզ-բը ան թշուառութեան մէջ ապրած է, ապա փոխադրուած է Ուորքեթթըր, ուր աշխատած է իրրեւ մետաղագործ, միաժամանակ իր ու-սումը շարունակած է Ուորքեթթըրի ակադեմ-միային մէջ: Ի վերջոյ ան իր ճամբան գտած է դէպի Պոսթըրն, ուր բացած է պղնձագործու-թեան եւ երկաթագործութեան աշխատանոց մը: Կայրուածներու առուծախով զբաղէի ետք զիգած է պատկառելի հարստութիւն մը։

Կիւլէսեան կը զննէր եւ կը կառուցէր շէն-քեր ու բնակարաններ: Ամէնէն գեղեցիկը անոր 13 սենեակէ րադկառած սեփական շքեղ բնակարանն էր, որ իշխանական ապարանքի նման լազմած է Չեսթրաթֆ Հիլի վրայ եւ կը զիտէ Պոսթըրն Քալէճի համալիրը: Անոր փա-ռահեղ ներքնամասերը եւ մասնագէտ արհես-տաւորներու կողմէ կառուցուած գանազան բաժինները տակաւին տպաւորիչ են եւ կը յու-չեն լաջող կեանքի մը պատմութիւնը։

Կիւլէսեանի բնակարանը այժմ ծախու է եւ կ'արժէ մէկ միլիոն 995 հազար տոլար: Անոր ներկայ տէրերը մանրամասնօրէն ուսումնա-սիրած են իրենց բնակած տան պատմութիւնը եւ պատներուն վրայ կախած են Կիւլէսեանի, անոր ընտանիքին եւ անոնց ժամանակակից-ներուն յուսանկարները, ինչպէս նաեւ՝ բնա-կարանին փառքի օրերու նկարները։

Կիւլէսեան քաղաքական աշխուժ գործունէու-թիւն վարած է: Ան կնոջական իրաւունքներու զատիկ պաշտպան մըն էր, հայ գաղթականնե-րու ապաստան շնորհած էր իր գործարանին մէջ եւ ձերակուտական թեկնածու էր։

«Տը Պոսթըրն Կլոպ» օրաթերթը 1905ին տե-ղեկացուցած էր, թէ Սիացեայ Նահանգներու ծովուժը կը ծրագրէր խորտակել իր «Եււ-էս-էս Քանթիթիթուշը» խորտակէցը եւ գայն գործածել գինուորական փորձերու համար: Կիւլէսեան 100 հազար տոլար առաջարկած է ծովուժի քաղաքապետութեան, որպէսզի խնայուի հռչակաւոր ռազմանաւը: Ան նաեւ աղմուկ բարձրացուցած է Սիացեայ Նահանգ-ներու տարածքին «հին խորտրնկէցներու» պահպանութեան համար: Ամերիկեան ծովու-ժը ի վերջոյ տեղի տուած է: Կիւլէսեան դար-ձած է առաջին գաղթականը, որ Ամերիկայի Յիզափոխութեան Զաւակներու պատուոյ ան-դամ հռչակուած է: Ան նաեւ Հին Խորտընկէց-ներու Ընկերակցութեան առաջին նախագահը նշանակուած է։

Կիւլէսեան իր երկրորդ կնոջ՝ Երաժիշտ Կրէյս Ուուրրիի հետ յօրինած է իր կեանքին վրայ հիմնուած երաժշտական թատերախաղ մը, որ 1925ին ներկայացուած է Ուիլյամ թա-տերասրանի մէջ: Հետագային ան իր «Մէլալ իմ Ամերիքա» վերնադիրով թատերախաղը տարած է Նիւ Եորք, ուր գայն ներկայացու-ցած է «Տի լիմիլընք» անունան տակ, Քորթթ թատերասրանի մէջ։

Կիւլէսեան մահացած է 1951ին: Այսօր դա-սական ոճը վերանկեզանցնող անոր սպի-տակ բնակարանը իր հսկայական սիւներով, կամարաւոր պատուհաններով, ընդարձակ հիւրասրահներով եւ գեղատեսիլ միջավայրով տակաւին կը պահէ վաղեմի պերճաշուք ցու-ցադրաժայրի մը զգացողութիւնը։

ՏԸ ՊՈՍԹԸՆ ԿԼՈՊ»

(Յապաւում)

«ԶԱՅՆ ԵՒ ԿԱՏԱՂՈՒԹԻՒՆ»

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԱԵՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱԷՆ ՄԸ ԿԸ ԽՈՐԱՆԱՅ ԱՍԵՐԻԿԱԸԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ՝ ԱՐԹԻՆԵԱՆՆԵՐՈՒ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ ԾԱՒԱՆԱԾ ՎԵՃԵՐՈՒՆ ՄԵՋ։

«ՄԸՔԸՐԻ ԼԻՈՒԴ» ԿԸ ԳՐԷ.

Բեմադրիչ Եոշ Արընսընի «Սաուու Էնու Ֆըրի» ժապաւէնը կը գտնուի յտղա-կան աշխարհին եւ խուլերու մշակոյթին հան-քիպման կէտին վրայ եւ կը դիմագրաւէ ան-խուսափելի րախումբի մը փտանգը, գիտական վերջին նորութեան՝ ականջի արուեստական խիուելջի յայտնադործութեան պատճառով: Խուլ մանուկներու ծնողներ գայն կը նկատեն հրաշք բուժում մը, իսկ խուլերու հաւաքակա-նութեան մէջ ոմանք գայն կը համարեն «Ֆրանքընշթայնի հրէշներուն» ծնունդ տալու փորձ մը։

Այս վէճին մասնակցող հակադիր կողմերը կը ցուցաբրեն լարդական արդարամտու-թեան զգացողութիւն մը: Մակայն անոնք իրենց ձայնը կը րարձրացնեն նշաններու լե-զուով: «Սաուու Էնու Ֆըրի» ժապաւէնը նա րա-հասնուած է վիտեռլի գործիքով եւ չկար կը նմանի տուենը պատրաստուած ժապաւէնի: Մակայն ինչ տուն եւ ինչ ժապաւէն։


Վէճը կը վերաբերի ծ տարեկան Հեթըր Ար-թիւնային, որ իր խուլ ծնողներուն՝ Փիթըրի եւ Նիթայի կը յայտնէ ականջի արուեստական խիուելջ մը ունենալու իր փափաքը: Թէեւ ծնողները կասկածով կը դիմաւորեն որեւէ բան, որ պիտի խլէր անոր «խուլի ինքնու-թիւնը», սակայն անոնք կը փորձեն քաղաքա-կան ուղղափառութեան նման խիտ կեցածաժը չցուցարբերել եւ մտածել, թէ արդեօք արուես-տական խիուելջի մը պատուաստումը պիտի բարելաւէ՞ր իրենց զաւակին կեանքը։

Մակայն երբ Փիթըրի եղբայրը, որուն լսո-ղութիւնը բնական է, եւ անոր կինը խուլ գա-ւակ մը կ'ունենան, ընտանիքին մէջ վէճերը խոր վիհեր կը յառաջացնեն, որովհետեւ անոնք կ'որոշեն իրենց զաւակին լսողութիւնը վերա-կանգնել ականջի արուեստական խիուելջի պատուաստումով։

Ժապաւէնին մէջ անձայն մենախօսութիւն-ները եւ բուռնցքով վէճերը կատարելական կը թարգմանուին «խուլ» ձայներով: Փիթըր սկիզ-բէն կարուկ կերպով կը յայտարարէ իր կեց-ուածքը. «Ես կ'ուզեմ խուլ մնալ», կ'ըսէ ան։

Փիթըր իր հօր կը բացատրէ, թէ խուլթիւնը այլեւս թերութիւն մը կամ պակաս մը չի հա-մարեր: Անոր կարծիքով խուլթիւնը րարեքր ուժ մըն է հաւաքականութեան համար, «անի-կա ձգողական ուժին լուռ եւ չողացող ծիա-ծանն է»։

Մակայն Փիթըրի հայրն ու եղբայրը գայն կը նախատեն իրրեւ «չարաշահող», որովհետեւ ան կը մերժէ արուեստական խիուելջով մը օժ-տել իր գաւը: «Ես կ'որոշեմ, թէ ինչն է յա-ւաքողանը Հեթըրի համար: Ես եմ անոր հայրը», կը պնդկայ ան:



ՃԱՏՐԱԿ. ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ
ՍԻԻՉԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ԵՒ ԲԱՅՅԻ ԾԻԿԵՐԵԱՆ
ՊԱՐԱԳԼՈՒՄԻ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Երեքշաբթի, 17 Յուլիսին սկսաւ Լիբանանի ճառարկայի ժողովրդական ժողովը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն 110 վարչականներ:

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիանի արտոնականութեան կը մասնակցին Լիբանանի աղջկանց արտոնականութեան Բարձրագոյն, Սիւզան Մուրատեան, Սերժ Յոփանեան, Բաֆֆի Ճիլէրեան, տղայ՝ Գէորգ Թերզեան եւ տղայ՝ Փաթարեան:

Երկու ճանդարեան ետք երկուշաբթեան կէտով առաջին դիրքը կը զբաղեն Սիւզան Մուրատեան եւ Բաֆֆի Ճիլէրեան: Մէկուկէս կէտ տպահոված են Քիւսիկ Մուրատեան եւ Սալոփ Փաթարեան, մինչ Սերժ Յոփանեան եւ տղայ՝ Գէորգ Թերզեան ունին մէկական կէտ:

Մրցաշարի աւարտին, յաւաքոյն 16 վարչականները պիտի միանան միջազգային դասուած 16 այլ մարզիկներու՝ խաղալու ճամբար Լիբանանի արտոնականութեան ստարտական փուլը:

ՓԻՆԿ ՓՈՆԿ
ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻ
ՄՐՅԱՆԱՐՔԸ ԿԸ ՍԿՍԻ

Յառաջիկայ Երկուշաբթի, 23 Յուլիսին, Քահրապայի դաշտին վրայ (Չուք) կը սկսի Լիբանանի փինկ իոնիկ անճառական տղոց եւ աղջկանց բաժակի մրցաշարը, որ կ'աւարտի Կիրակի, 29 Յուլիսին:

Մէկ շաբթուան վրայ երկարող այս մրցաշարին, Հ.Մ.Ը.Մ. իր մասնակցութիւնը կը բերէ եօթը մարզիկով (չորս աղջիկներ եւ երեք տղայ):

Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները.

Հարա Քէշէպէան, Լիզա Պարիքեան, Նոէլ Քէշէան, Էսփերանս Խուրի, Ալֆրէտ - Նաթըմ Սարգիսեան, Ռազմիկ Շեմէմեան եւ Ռոնէ Տաքքաշ:

ՍԱՄԱՐԱՆՇ ՓՈԽԱԴՐՈՒԵՑԱԻ
ՀԻՒԱՆԴԱՆՈՅ



Սամարանշ

Ողիմպիական Միջազգային Կոմիտէի նախին նախագահ՝ Խուան Անթոնիօ Սամարանշ, խիստաւարտած է Լոզանի մէկ հիւանդանոցը, ան լը տառապի շնչառութեան դժուարութենէ: Ըստ միջիններուն, տագնապը գերյոգնածութեան տեսեւորով է:

Սամարանշ հիւանդանոց փոխադրուեցաւ իր տարեկանին օրը, ան 81 տարեկան եղաւ: Սպաւաքին ամբողջ 21 տարի անենայն յաջողութեամբ ակրեց իր պաշտօնը, մինչեւ անցեալ յրկուշաբթի օր, երբ անոր փոխարէն նախագահ քննարկուեցաւ 59 տարեկան պելճիքացի վիշաբու ժաք Ռոկո:

Երկուշաբթի օր, պաշտօնին փոխանցման ժամանակ, Սամարանշ շատ յուզուած էր: Ան Մոսկուայի մէջ կատարուած արարողութենէն անմիջապէս ետք մեկնած էր դէպի իր բնակավայրը Չուիցերիա:

Սամարանշի բժիշկները կը յայտնեն, թէ անոր վիճակը մտահոգիչ չէ, բայց պէտք է ուշադիր ըլլալ: Ան քանի մը օր եւս յատուկ հսկողութեան տակ պիտի մնայ:

Ողիմպիական Միջազգային Կոմիտէն Չուիցերիայի մէջ պիտի կառուցէ Ողիմպիական Թանգարան մը, զոր պիտի կոչուի Սամարանշի անունով:

Սամարանշ ցմախ պիտի մնայ պատուոյ նախագահ:

«ԶՈՓԱՆ ԱՍԵՐԻՔԱՆ»
ՊՐԱՉԻԼ ՇԱՍԱԻ ԲԱՌՈՐԴ
ԱԴԱՐՏԱԿԱՆԻՆ

«Զոփա Ամերիքա»ի Ա. հանգրուանին իր կատարած վերջին մրցումին, Պրաչիլ 3-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Փարակուէյը եւ Բ. խմբակին պարագլուխի դիրքը գրաւելէ ետք ապահովեց քառորդ աւարտականին իրենց տոմսերը ապահովեցին նաեւ Մեքսիքա (2րդ) եւ Փերու (3րդ). մինչ Փարակուէյը դուրս մնաց:

Հետաքրքրական մրցումէ մը ետք վերջ գտաւ Պրաչիլ - Փարակուէյ ճակատումը, որովհետեւ օրուան իրաւարարը չորս անգամ գործածեց կարմիր քարտը:



Պրաչիլցիք կը տօնեն իրենց յաղթանակը:

Պրաչիլ, որ միայն հաւասարութեան մը պէտք ունէր ապահովելու համար յաջորդ հանգրուանին իր տոմսը, Ա. կիսախաղին 1-0 արդիւնքով պարտուած էր: Բ. կիսախաղին սակայն, Պրաչիլ յաջողեցաւ նշանակել երեք կոլ. շնորհիւ՝ Ալեքսի (60րդ), Պելեթթի (90րդ) եւ Տենիստի (91րդ):

Փարակուէյին կարմիր քարտ ստացաւ Տենիսա Քանիպա, իսկ Պրաչիլին՝ Ռոքէ Ժոնիոր, Լուիս Ֆիլիպէ Սքոլարի (մարզիչ) եւ Ֆլաւիօ Մուրթուս (օգնական մարզիչ): Սքոլարիի կարմիր քարտ ստանալէն

կարճատեւ մը ետք Մուրթուս եւս եւս թարկուեցաւ նոյն ճակատագիրին, որովհետեւ երկուքն ալ դժգոհ էին օրուան իրաւարարին անտեղի եւ ինչպիսի Փարակուէյի սուլուած սուիչէն:

Իր կատարած վերջին չորս մրցումներուն

Ստորեւ՝ Բ. խմբակին վերջնական դասաւորումը.	Յաղթ.	Հաւ.	Պարտ.	Կէտ
1. Պրաչիլ	2	0	1	6
2. Մեքսիքա	1	1	1	4
3. Փերու	1	1	1	4
4. Փարակուէյ	0	2	1	3

Ստորեւ՝ Ա. հանգրուանի վերջին օրուան մրցումները, որոնք տեղի պիտի ունենան այսօր.

Գ. ՆՄԲԵԿ
Պոլիվիա - Ընսթա Ռիքա
Հոնտուրաս - Ուրուկուէյ

ԼԻՎԸՐՓՈՒԼ - ԹԱՅԼԷՆՏ 3-1

Ասիական Երկիրներ իր կատարած չորսաշաբթի ծիրէն ներս, Լիվըրփուլը երէկ արձանագրեց իր երկրորդ յաղթանակը՝ Պանթըրի մէջ տեղի ունեցած մրցումին 3-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Թայլենտը, չուրջ 50 հազար համակիրներու ներկայութեամբ:

Մրցումին հաշիւը բացաւ Մայքլ Օուրն, գլուխով իր նշանակած կորով (8րդ), որմէ կարճ տեւք մը ետք Թանանչայ Պորիպան գորաւոր հարուածով մը նշանակեց իր կազմին հաւասարութեան կուլը (22րդ): Ա. կիսախաղին վերջին վայրկեանին Օուրն նշանակեց իր կազմին երկրորդ կորը, իսկ Բ. կիսախաղին Նիք Պարմպի արդիւնքը բարձրացուց 3-1ի (71րդ):

ԻՊՐԱՀԻՄ ՊԱ
ՓՈԽ ՏՐՈՒԵՑԱԻ ՄԱՐՍԵՅԻ

Յրանցացի միջազգային միջնապահ Իպրահիմ Պա երէկ մէկ տարուան համար Ա. Սէ. Միլանէն փոխ տրուեցաւ Մարսէյի, յայտնեցին Ֆրանսական ակումբի պատասխանատուները:

Մարսէյի պատասխանատուները յայտնեցին նաեւ, թէ յոյսով են, որ Ա. Սէ. Միլանէն իրենց կազմին պիտի միացնեն գերմանացի միջազգային յառաջապահ Օլիվիէր Պիրիոֆը, անոր փոխանցման համար իտալական կազմին վճարելով շուրջ երկու միլիոն տուրք:

27 տարեկան Պա, որ 27 անգամ կրած է Ֆրանսայի ազգային խումբին շապիկը, ծնած է Սենէկալ: Նախքան Ա. Սէ. Միլան իր փոխանցումը (1997ին), ան մաս կազմած է Էք Նաւրի եւ Պորտոյի:

ՌՈԿԵ ԿԸ ՀԱՄՈՉԷ ՓԱՌԻՆՏԸ,
ՈՐ ՄԵՆՅ ՊԱՇՏՈՆԻՆ ՎՐԱՅ

Ողիմպիական Միջազգային Կոմիտէի նորին տիր նախագահ Ժաք Ռոկ երէկ ըսաւ, թէ մեծ աշխատանք կը տանի, որ պէսիկ համոզէ քանադացիները:

Գի Տիք Փաուստը, որ մնայ իր պաշտօնին վրայ: Ան Միջազգային Կոմիտէի տնտեսական յանձնախումբի նախագահն է, ինչպէս նաեւ իսթանբուլի զեյթուրի գործածութեան զէմ պաշտարող համաշխարհային մարմինի նախագահը:

Փաուստը ընդվզած էր Ռոկէն, գալն ամբաստանելով նախագահի ընտրութեան համար միջամտութիւններ, յատկապէս՝ Սամարանշի միջամտութիւնը օգտագործած ըլլալու յանցանքով: Փաուստը ինք եւս թեկնածու էր նախագահութեան: Ան այժմ որոշած է հեռանալ իր պաշտօնէն, սակայն Ռոկը կը պորձէ ամէն գնով համոզել զայն:

ԼԱԻԱԳՈՅՆԸ ՄՐՅՈՒՄԻՆ
ԱՌԱՋԻՆԸ ՉԷ, ԱՅԼ՝
ՀԵՌԱՏԵՍԻԼԻՆ ՎԵՐՁԻՆԸ

Երկարատեւ քանակէճէ ետք, Ողիմպիական Միջազգային Կոմիտէն փոխեց խաղերու մրցանակակիրներու պարգեւատրման արարողակարգը՝ խախտելով 104 տարուան իր անադիւնութիւնը: Այսուհետեւ կը պարգեւատրուի պրոֆէսորները, յետոյ՝ արծաթէ մետալակիրը եւ միայն վերջը՝ խաղերուն:

Այս փոփոխութիւնը կատարուեցաւ պատկերասփիւռի ընկերութեանց խնդրանքով, որոնց կարծիքով՝ վերջինը ամէնէն ապրիլիկն է:

ՊԱՍՔԵԹՊՈԼ
ԱՅՍՕՐ ՇԱՆԿՅԱՅԻ ՄԵՉ
ԿԸ ՍԿՍԻ ԱՍԻՈՅ
21ՐԴ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Այսօր՝ Ուրբաթ, Շանկհայի մէջ (Չինաստան) կը սկսի տղոց պասքեթպոլի Ասիոյ 21րդ ախոյեանութիւնը մասնակցութեամբ 16 խումբերու, լամուած չորս խմբակի:

Այդ չորս խմբակներն են.

Ա. խմբակ. Չինաստան, Հոնկ Գոնկ, Թայլենտ եւ Քաթար:

Բ. խմբակ. Հարաւային Գորէա, Սինկապուր, Լիբանան եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններ:

Գ. խմբակ. Թայվէ, Ուզպէքիստան եւ Հնդկաստան:

Դ. խմբակ. Ճապոն, Գոնէյթ եւ Սուրիա:

Ստորեւ՝ Լիբանանի ազգային խումբին կատարելիք մրցումներուն յայտարարը (մրցումներուն ժամերը՝ Պէյրութի ժամով).

- Ուրբաթ, 20 Յուլիս
Լիբանան - Ա. Մ. Էմիրութիւններ (ժամը՝ 13:00ին)
- Շաբաթ, 21 Յուլիս
Լիբանան - Հարաւային Գորէա (ժամը՝ 9:00ին, առաւօտեան)
- Կիրակի, 22 Յուլիս
Լիբանան - Սինկապուր (ժամը 13:30ին)
- Նշենք, թէ այսօր սկսելիք պասքեթպոլի ախոյեանութեան այս մրցաշարը կ'աւարտի 28 Յուլիսին:
- Լիբանանի պասքեթպոլի տղոց ազգային խումբը Չինաստան մեկնեցաւ Երեքշաբթի, 17 Յուլիսին:
- ՆՈՅՆ ՕՐԸ, Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնը անակնկալ ժողով մը գումարելով, որոշեց երեք տարեկան կախակալել իմա Էսթիմեանը, որ իր մասնակցութիւնը չէր բերեր Լիբանանի աղջկանց պասքեթպոլի ազգային խումբին կատարած փորձերուն:
- Ֆետերասիոնին մէկ պատասխանատուն յայտնեց, թէ այդ մէկը պիտի վճռուի յառաջիկայ Երկուշաբթի, 30 Յուլիսին, երբ ֆետերասիոնը գումարէ իր հերթական ժողովը:

ՌԻՏԱՆԹԱՐ ՓՈԽ ՏՐՈՒԵՑԱԻ
ՀԱՄՊՈՒՐԿԻ

Թատամոն Սուրի մարզիկ Ռիտա Անթար (21 տարեկան) անցնող քանի մը օրերուն մէկ տարուան համար փոխ տրուեցաւ գերմանական Համպուրկ ակումբին, փոխան՝ 210 հազար տուրքով:

Այդ մէկը յայտնեց Թատամոն Սուրի նախագահ Ալի Ահմէտ, աւելցնելով, որ Համպուրկէն բացի Ռիտա լոյսով հետաքրքրուած էին նաեւ Պայէրն Միլենի եւ Քայզերսլաութըրն, որոնք Լիբանանի ֆութպոլի ազգային խումբին կատարած մրցումներուն (2002ի Մոնտրալի գումար) ընթացքին շատ մօտէն կը հետաքրքրուէին իրմով:

Ահմէտ աւելցուց, որ Անթար փոխ տրուեցաւ Համպուրկի, որովհետեւ անոր միտքով, ան աւելի առիթ ունէր զաշտ ներկայանալու հիմնական կազմին հետ, քան միւս կազմերուն հետ, որոնք ունին բազմաթիւ անուանի մարզիկներ:

1995ին Սիերա Լէոնէն Լիբանան ժամանելէ ետք, Ռիտա Անթար հետգհետէ սկսաւ յուսարձակները իր վրայ կեդրոնացնել եւ զառնալ փնտռուած մարզիկ մը, իր ակումբին եւ ազգային խումբին կողմէ:

Վերջին երեք շաբաթներուն, գերմանական ազգային ախոյեանութիւններուն հետ փորձեր կատարած Անթար Լիբանանի ազգային խումբին հետ նշանակած է ութ կոլ: Ան իր առաջին միջազգային կոլը նշանակեց 25 Մայիս 2000ին (Քայզերսլաութըրնի դէմ), իսկ վերջին կոլը՝ 26 Մայիս 2001ին (Փաքիստանի դէմ):

ՄԻ ՍՈՐՆԱԸ

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ

ՈՐԴ. ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

(ՖՈՒԹՊՈԼ - ԱՐԼԷԹ - ՓԻՆԿ ՓՈՆԿ)

11ԷՆ 16 ՕԳՈՍՏՈՍ 2001

